ք. Երևան, Մ. Մկրտչյան 5 **15 սեպտեմբերի 2017 թվական**

Արձանագրություն N 7

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության
Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի կառավարման խորհրդի
նիստի

Ներկա էին՝

Խորհրդի նախագահ՝ Սուրեն Կարայանը,

Խորհրդի անդամներ՝ Կարեն Իսահանյանը, Հայկ Այվազյանը, Արմեն Գևորգյանը, Կարեն Սահակյանը, Կարեն Միրզաբեկյանը, Մելիտա Հակոբյանը, Աբգար Մկրտչյանը և Էմին Աբգարյանը:

Մասնակցում էին՝ Լևոն Խալիկյանը, Ալիս Երանոսյանը, Արարատ Սարգսյանը, Տարոն Հակոբյանը:

Քարտուղար՝ Սուրեն Պետրոսյան:

Օրակարգի հարցերը հաստատվեց խորհրդի կողմից ևս մեկ անգամ հիշեցվեց, որ յուրաքանչյուր խորհրդի նիստը սկսել նախորդ նիստով տրված հանձնարարականների կատարման մասին հաղորդագրությունը լսելուց հետո:

1. Հաջորդ նիստում ներկայացնել առուտրս ֆիրմայի հետ կայքի կարգավորման համար պայմանագիրը, բյուջեում նախատեսել ծախսեր, աշխատակազմի ղեկավարի հետ քննարկել և արդյունքների մասին տեղեկացնել խորհրդին:

2. Խորհրդի հաստատմանը ներկայացնել երկրորդ տեղակալի հաստիքի վերաբերյալ ՀՀ կառավարության որոշման նախագիծի վերաբերյալ տեղեկատվություն:

Օրակարգում քննարկման ենթակա հարցեր՝

1. Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի 2017թվականի ստուգումների տարեկան ծրագրի փոփոխության հաստատում:

2. Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի 2017թվականի երկրորդ եռամսյակում կատարված աշխատանքների հաշվետվություն:
3. Առաջին կիսամյակին ստացված բողոքների վերաբերյալ վիճակագրական հաշվետվություն :
4. Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի հաստիքացուցակում և պաշտոնի անձնագրում փոփոխություն կատարելու մասին:
5. Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի որակի ապահովման բաժնի 2017թ. առաջին կիսամյակի հաշվետվությունը:
6. Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի երկրորդ եռամսյակի կատարողականի գնահատումը:

Լսեցին՝

1 Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի 2017թվականի ստուգումների տարեկան ծրագրի փոփոխության հաստատում:

Զեկուցող՝ Լևոն Խալիկյանը նախքան առաջին հարցի քննարկմանն անդրադառնալը խորհրդի անդամներին տեղեկացրեց, որ Տեսչական մարմնի 2018 թվականի պահպանման ծախսերի հայտերը ժամանակի սղության պատճառով ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությունը Տեսչական մարմնի դրական կարծիքով ներկայացրել է ՀՀ ֆինանսների նախարարության քննարկմանը: Այնուհետև ներկայացվեց ստուգումների տարեկան ծրագրի փոփոխության այն հիմնական պատճառները, որից ելնելով առաջարկվում են կատարել համապատասխան փոփոխություններ:

Արտահայտվեցին՝ Հայկ Այվազյանը, Կարեն Միրզաբեկյանը, Մելիտա Հակոբյանը:
Առաջարկվեց՝ Համաձայնություն տալ ծրագրի փոփոխությանը և հետևել որ տարեկան կտրվածքով ապահովվի ծրագրի լիարժեք կատարումը:
Որոշվեց՝ Հավանություն տալ 2017թվականի ստուգումների տարեկան ծրագրի փոփոխությանը:

Կողմ – 9:

Դեմ – 0:

2. Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի 2017թվականի երկրորդ եռամսյակում կատարված աշխատանքների հաշվետվություն:

Զեկուցող՝ Լ.Խալիկյան:

Արտահայտվեցին՝ Հայկ Այվազյանը նշեց որ Տեսչական մարմնի կատարված աշխատանքների գնահատականի շեշտը պետք է դրվի ոչ թե բյուջե բռնագանձված գումարների կամ նշանակված տուգանքների չափերով այլ հակիրճ ներկայացվի

կատարված աշխատանքները՝ շեշտադրումը դնելով սերտիֆիացման ոլորտում,օրենսդրական դաշտում և հանրությանը տեղեկացնելու մասին կատարված աշխատանքներին:
Որոշվեց՝ Հավանություն տալ առաջին կիսամյակում կատարված աշխատանքներին՝ կատարելով համապատասխան լրամշակումները:
Կողմ – 9:

Դեմ – 0:

3.Առաջին կիսամյակին ստացված բողոքների վերաբերյալ վիճակագրական հաշվետվություն :

Զեկուցող՝ Լ.Խալիկյանը ներկայացրեց առաջին կիսամյակին ստացված բողոքների վերաբերյալ վիճակագրական տվյալները, կատարված աշխատանքները:

Արտահայտվեցին՝ Հայկ Այվազյանը, Կարեն Միրզախանյանը և Մելիտա Հակոբյանը:
Առաջարկվեց՝ Ընդունել ի գիտություն :
Որոշվեց՝ Ընդունել ի գիտություն :

Կողմ – 9:

Դեմ – 0:

4. Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի հաստիքացուցակում և պաշտոնի անձնագրում փոփոխություն կատարելու մասին:

Զեկուցող՝ Լ.Խալիկյանը ներկայացրեց, որ ելնելով աշխատանքային անհրաժեշտությունից չափագիտական կանոնների և նորմերի վերահսկողության վարչության թափուր հաստիքներից առաջին կարգի մասնագետի (37-4.1-47) հաստիքը փոխել նույն վարչության գլխավոր մասնագետի հաստիքով:
Արտահայտվեցին՝ Սուրեն Կարայանը, Կարեն Իսախանյանը, Մելիտա Հակոբյանը:
Առաջարկվեց՝ Հավանություն տալ հաստիքացուցակում և պաշտոնի անձնագրում փոփոխություն կատարելու:
Որոշվեց՝ Հավանություն տալ:

Կողմ – 9:

Դեմ – 0:

5. Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի որակի ապահովման բաժնի 2017թ. առաջին կիսամյակի հաշվետվությունը:

Զեկուցող՝ Ա.Սարգսյան:

Արտահայտվեցին՝ Հայկ Այվազյանը, Կարեն Միրզախանյանը և Մելիտա Հակոբյանը:
Առաջարկվեց՝ Ընդունել ի գիտություն :
Հավանության չարժանացան՝ Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի որակի ապահովման բաժնի 2017թ. առաջին կիսամյակի հաշվետվության թիվ 6 և թիվ 7 կետերի առաջարկությունները:

Որոշվեց՝ Ընդունել ի գիտություն :

Կողմ – 9:

Դեմ – 0:

6. Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի երկրորդ եռամսյակի կատարողականի գնահատման հաստատում:

Զեկուցող՝ Ա.Սարգսյան:

Արտահայտվեցին՝ Կարեն Իսախանյանը, Հայկ Այվազյանը, Արմեն Գևորգյանը, Կարեն Միրզաբեկյանը, Մելիտա Հակոբյանը:

Որոշվեց՝ Հաստատել տեսչական մարմնի 2017 թվականի երկրորդ եռամսյակի կատարողականի գնահատումը:

Կողմ – 9:

Դեմ – 0:

Խորհրդի նախագահ՝ _____ **Սուրեն Կարայան**

Խորհրդի անդամներ՝

_____ **Կարեն Իսախանյան**

_____ **Հայկ Այվազյան**

_____ **Արմեն Գևորգյան**

_____ **Կարեն Սահակյան**

_____ **Աբգար Մկրտչյան**

_____ **Էմին Աբգարյան**

Քարտուղար՝ _____ **Սուրեն Պետրոսյան**

_____ **Կարեն Միրզաբեկյան**

_____ Մելիտա Հակոբյան